ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<3>> ապրիլի 2013 թվական N: 80-Ա **ք.Գյումրի**

<<ԳՅՈՒՄՐՈՒ <<ՍԱՄԱՐԻԹԵՐ>> ՀԻՎԱՆԴԱՆՈՑ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ <<ՍԱՄԱՐԻԹԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 55-րդ, 110-րդ հոդվածների, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագրի «Գյումրի քաղաք» բաժնի 4.1-րդ կետի դրույթներով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 21-ի N 557 և 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> N 1572-Ն որոշման 3-րդ կետի 6-րդ ենթակետի <<դ>> պարբերության.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. <<Գյումրու <<Սամարիթեր>> հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանել <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության:

2. Հաստատել <<Գյումրու <<Սամարիթեր>> հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխված հասարակ անվանական բաժնետոմսերի փոխարկման արդյունքները <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի, այն է ընկերության կողմից տեղաբաշխված թվով տաս հատ՝ յուրաքանչյուրը 10 500 000 (տասը միլիոն հինգ հարյուր հազար) դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերը փոխարկվում են <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կողմից թողարկված թվով տաս հատ՝ յուրաքանչյուրը 10 500 000 (տասը միլիոն հինգ հարյուր հազար) դրամ անվանական արժեքով հասարակ անվանական բաժնետոմսերի:

3. Հաստատել <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը (նոր խմբագրությամբ)՝ համաձայն հավելվածի:

4. <<Սամարիթեր վերականգնողական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի պաշտոնակատար նշանակել Ռաֆիկ Խաչատրյանին (անձնագիր AM 0454813 տրված 2001 թվականի սեպտեմբերի 20-ին, 016-ի կողմից, բնակության վայրն է՝ քաղաք Գյումրի, Շիրակացի փողոց, 175 շենք, բնակարան 6, Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության քարտի համարը՝ 1911490141)՝ նրան ազատելով <<Գյումրու <<Սամարիթեր>> հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն պաշտոնակատարի պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ**

Իսկականի հետ ճիշտ է՝